

ՔՐԻՍՏՈՆԻ ՀԵՏՔԱՎ

ՍԻՐՈՅ ՅԱՂԹԱՆԱԿԲ.

ԳԼ. Ա.

**Վ**երջինիա Պեղը երկու լացող աղջիկներին հարեան սենեակը տարաւ Հռաքէլը մի քիչ ջուր խմեց ու շուտով հանդարտուեց, իսկ մինչև հոգու խորքը յուզուած թշուառ աղջիկը շարունակում էր լալ, և որքան Վերջինիան ու Հռաքէլը միսիթարում ու փայփայում էին նրան, այնքան աւելի ու աւելի էր յուզուամ ու հեկեկում.

— Թողէք ինձ... ես զատ, ես զզուելի..., Մի կպէք ինձ: Դուք մաքուր էք: Ես ձեզ կը կեզտոտեմ: Դուք չգիտէք, թէ ես ինչ տեսակ ճահճի մէջ եմ ընկղմուած: Զէ որ ես ընկած ...

— Մոռացէք այդ ամենը,—միսիթարում էր նրան Վիրջինիան, շոյելով նրա մազերը: — Դուք ոչ զզուելի էք և ոչ էլ ընկած: Դուք մի խեղճ ու թշուառ աղջիկ էք, երեսի վրայ ձգուած ու անօգնական մի երեխայ:

— Ոչ, — հեծկլտում էր խեղճ աղջիկը, — Ես փչացած եմ: Մենք բոլորս այստեղ՝ Ռւզիդ Անկինում նման ենք բորոտների: Ինքներս փտում ենք և ուրիշներին վարակում:

— Այդ կանցնի: Ցաւին կարելի է գարման անել, — հանգստացնում էր նրան Հռաքէլը: — Փրկիչը բժշկում էր բորոտներին ևս: Նա նոյն իսկ մեռելներին յարութիւն էր տալիս: Ոչ միայն մարմնով մեռածներին, ինչպէս օրինակ Ղազարոսին, Յայրոսի աղջկան, այլ և հոգով մեռածներին: Յիշեցէք մեղաւոր կնոջը փարիսեցի Սիմոնի տանը, մաքսաւոր Զաքէսոսին, աջակողմեան աւազակին խաչի վրայ: Բժիշկներն ասում են, թէ երբէք չպէտք է յուսահատուել հիւանդի անկողնու մօտ: Ով դիտէ, թէ ինչ կենսական

ոյժեր են թաքնուած մարդու կաղմուածքի մէջ։ Կարծում էք թէ մահը անխուսափելի է, և յանկարծ կատարում է մի հրաշք, ճգնաժամք անցնում է անվտանգ, և մահուան դատապարաւած հիւանդը առողջանում է, նոյնն է նաև հոգով հիւանդների կամ, ինչպէս դուք ձեզ անուանեցիք, բարոյական բորսոների նկատմամբ ՄԵՆՔ հէնց նրա համար ԵՆՔ գալիս - այստեղ, որ հաւատում ենք, թէ մարդկային հոգին այնպիսի զօրութիւն անի, որ կարող է նոյն իսկ ճահճի յատակից վեր բարձրացնել ընկածին։ Գլխաւորն այն է, թէ արդեօք անկեղծօրէն ուղղում էք դուրս գալ այդ տղմից, որի մէջ կամայ-ակամայ խրուել էք։

Այս ուղում եմ, վազուց է որ ուղում եմ, բայց ուժերս չեն ներում։ Քանի քանի անգամ ինձ համար անտանելի է դարձել իմ կեանքի տիզմը, փորձել եմ դուրս գալ նրա միջից և սակայն, որպէս թոյլ սոքերով հիւանդը սայթաքող ճանապարհի վրայ, նորից վայր ե՞մ ընկել ու աւելի խորը իջել։

—ՄԵՆՔ ձեզ կօգնենք։ ՄԵՆՔ կը բռնենք ձեր ձեռաքերից և ճահճից հանելով՝ հաստատուն ճանապարհի վըրայ կը դնենք ձեզ, —ասում էր Վիրջինիան։

—Ասացէք, դուք այստեղ՝ «Ուղիղ Անկիւնում» որիէ աղգական ունիք։ Ո՞րտեղ էք բնակուում և ի՞նչ է ձեր անօւնը։

—Իմ անօւնն է Աննա Կրոս, ես բոլորովին մենակ եմ։ Հօրս չեմ յիշում, իսկ մայրս մեռել է վեց տարի առաջ։ Մայրս սաստիկ խմում էր, նրան գտել էին փողոցում մեռած դրութեան մէջ։

Վիրջինիան շարունակում էր շոյել նրա գլուխը, իսկ Հուաքէլը քնքշաբար գրկեց նրան ու պինդ համբուրեց ճակատը։

Հաղիւ հանգարատուած Աննա Կրոսը կրկին սկսեց հեկեկալ, սակայն այս անգամ ոչ թէ վշտի ու յուսահատութեան արցունքներ էին, այլ քնքոյշ սիրոյ պատճառած խաղաղ ուրախութեան։

—Այժմ ի՞նչ պէտք է անել, —հարցրեց Հուաքէլը Վիր-

ջինիային, — Աննային այստեղ՝ «Ռւզիկ Անկիւնում» չի կարելի թողնել:

«Ռւզիկ Անկիւն» խօսքի վրայ Աննան ցնցուեց և երեսայի պէս մեկնելով ձեռքերը, ազերսանքով տատց.

— Այս, այստեղ չի կարելի, այստեղ սոսկալի է, Տարեկ ինձ այստեղից։

— Մի վախենաք, սիրելիս, — հանգստացրեց նրան Վիրջինիան, — ես առ այժմ ձեզ կը տանեմ ինձ մօտ, իսկ յետոյ կը տեսնենք։

Չսպասելով ժողովի վերջին՝ աղջիկները ճանապարհ ընկան դէպի տուն ձանապարհին Աննան ու Վիրջինիան ոչ մի խօսք չփոխանակեցին։ Նրանք խորասուզուած էին իրենց մաքերի մէջ։ Աննային այնպէս էր թուում, որ բոլոր անցած դարձածը առաջք մի երեսյթ էր և ոչ թէ իրականութիւն։ Նա վախենում էր, որ իրեն պատահած փոփոխութիւնը շատ կարճատե լինի, կրկին երեսի վրայ թողնուի ու նախկին տղմի մէջ խորասուզուի։

Վիրջինիան ես լուռ էր նա մտածում էր տատի հետ ունենալիք խօսակցութեան մասին։ Անշուշտ տատը լսել անդամ չի ուզենալու Սննա Կրոսի մտսին։ Նա պէտք է վրդովուի, տաքանայ և պահանջէ բերած աղջկան անմիշապէս հեռացնել տանից։ Ի՞նչ պէտք է անէր։ Աննա Կըրոսին անօգնական թողնել չի կարելի, իսկ հակառակ տատի կամքին պահել նրան տանը նոյնպէս չի կարելի։

Մէկին բարիք անելով, չպէտք է վշտացնել մի ուշրիշին, — մտածում էր Վիրջինիան, — Բարի գործը պէտք է միանգամայն հեռու լինի վիշտ, վիրաւորանք ու զայրոյթ պատճառելուց, Եւ յիրաւի, մէկին քնքշաբար գրկելով ու կրծքիս սեղմելով, ինչ իրաւոնքով պէտք է մի ուրիշին կոպտութեամբ դէն հրեմ ինձնից։ Միթէ ես պարտաւոր չեմ հաւասարապէս բարի և հեղ լինելու դէպի ամեն որ, լինի դա բարի թէ չար, քնքոյշ թէ կոպիտ։

Հէնց այս Աննա Կրոսը, որին ես իմ հովանաւորութեան տակ եմ առել, հօ մի սուրբ չէ, բայց և այնպէս ես նըան չեմ հայհոյում, չեմ յանդիմանում, այլ փաղաք-

շահքով, սիրով աշխատում եմ բարոյապէս բարձրացնելու մաքրել նրան։ Ենչու նոյն եղանակով չվարուեմ նաև տառիս հետ։

Աւստի և, վճռեց Վիրջինիան, քան թէ վիճեմ տառիս հետ ու մեղադրեմ նրան անարդարութեան ու խստութեան մէջ, աւելի լաւ է, աշխատեմ սիրով գրդել նրան, որ խղճայ թշուառ Աննային ու պատսպարէ նրան։

Այս որոշմամբ Վիրջինիան Աննա Կրոսի հետ տուն հասաւ, Տառը կանգնած էր պատուհանի առաջ և նաշյում էր դէպի փողօց։

Վիրջինիան գեռ չէր հանուել, երբ նրան տառի մօտ կանչեցին։

—Այդ ուժը հետ ես եկել, —խստութեամբ հարցրեց տառը Վիրջինիային, հէնց որ նա ներս մտաւ, —Հետդում ես բերել։

—Դա Աննա Կրոսն է, մի աղջիկ ...

—Ես անունը չեմ հարցնում, —ընդհատեց տառը. —Ինձ համար մէկ է Կրոս են անուանում դրան թէ Ռոս։ Առաջնադրեմ, որտեղից բերիր դրան։ Լաւ աղջիկ ես դըտել։ Ել պակաս տեղ չունի, լաւ ընկերուհի ես գտել բեղ համար։ Ի՞նչպէս դու չամաչեցիր՝ նրա հետ միասին կառք նստել։ Դու մեզ ամենըիս կը խայտառակես։

—Համբերիր, սիրելի տառի, —հեղութեամբ ասաց Վիրջինիան, համբուրելով նրա ձեռքը։ —Նա իմ ընկերուհին չէ, այլ մի խեղճ ողորմելի աղջիկ է, որին պէտք է օգնել։ Նա միանգամայն արժանի է կարեկցութեան. նըրան արորել են, ոտի տակ են տուել մարդիկ։ Ես կարծում եմ, որ երբ մէկը դժբախտութեան մէջ է ու տանշուում է, չպէտք է մտածել, թէ նա ՛վ է, այլ թէ ի՞նչպէս պէտք է օգնել նրան։

—Բայց ի՞նչու դու նրան հետդ բերիր քաղաքի միջով։ Ի՞նչու դու չասացիր նրան, որ յետոյ գայ, եթէ անպատճառ ուզում էիր, որ նա այստեղ լինի։ Ի՞նչ կը մտածեն քո մասին մեր Տանօթները, որոնք կարող են տեսած մինել քեզ այդ աղջկոյ հետ միասին։ Այս ի՞նչ

Խայտառակութիւն է:

— Ի՞նչ խայտառակութեան բան կայ այստեղ, սիրելի տատի, — հարցրեց նորից Վիրջինիան, շոյելով տատի ձեռքերը: — Երեակայիր, ձմեռը սաստիկ ցրտին սահնակով անցնում ես մենակ և քաղաքից դուրս պատահում ես ձիւնի վրայ ընկած մի հարբած գիւղացու կամ հէնց թէ կուզ այս Աննա Կրոսին: Ձէ որ դու չես թողնիլ, որ նա սառչի. չես առիլ, եւս յետոյ մարդ կուղարկեմ նրա յետեից: Դու նրան կը վերցնես քեզ հետ, կը հրամայեաքել դէպի տուն, որտեղ կարելի կը լինի նրան տաքացնել և քեզ չի վրդովիլ այն միտքը, թէ ինչ կը մոածեն ճանապարհին պատահաբար քեզ հանդիպող ծանօթներդ: Նոյնն է և Աննա Կրոսի դէպքը: Երկար տարիների հոգեոր թմրութիւնից յետոյ խեղճ աղջկայ մէջ անսպասելի կերպով զարթել է գիտակցութիւնը, բորբոքուել է աստուածային, ըստ երեւութին, հանգած կայծը: Այսպիսի դէպքում գանդաղել, գործը յետաձգել չի կարելի. վտանագտուր է արթնացած խիղճը նոյն իսկ մի քանի ժամով մենակ թողնել: Թոյլ բոնկումը առանց օգնութեան մնալով կարող է հանգչել: Պէտք է շտապել բարի գործով օգնութեան հասնել: Իսկ այն որ ասում ես թէ ամօթ է, ես կարծում եմ, որ ամօթը ոչ թէ մի այդպիսի աղջկայ հետ կառքով զնալն է, այլ ընկածի մօտից, առանց նրան օգնութեան ձեռք մեկնելու, անուշադիր անցնելը: Ես հաւատացած եմ, որ դու ինքդ քեզ ու քեզ գատելով, կը համաձայնես, որ ես պարտաւոր էի բերելու խեղճ աղջկան մեզ մօտ:

— Ի՞նչպէս, — զայրացած ասաց տատը. նա ... Այդ Կրօսը ... Այստեղ ... Մեր տանը ապրի: Խելքդ հօ չես կորցրել:

— Լաւ, այստեղ սարսափելի ինչ բան կայ, իմ բարի տատի, — հանգստացնում էր նրան Վիրջինիան: — Ինչու այդպէս վախեցար:

— Ինչու տուն բերել դրան, ասա ինձ խնդրեմ, — շարունակում էր զայրացած տատը: — Միթէ քաղաքում

քիչ առաստարաններ, աստուածահաճոյ հիմնարկութիւններ կան, որտեղ կարելի էր տեղաւորել նրան մինչև ուղղուելը։ Աւզնւմ ես օգնել նրան Փող տուր նրան, տեղաւորիր ապաստարանում, բայց այստեղ պահելը ինչ միտք ունի, ինչի՞ համար են այդ ծայրայեղութիւնները։ Ի՞նչ ընկերութիւն պէտք է անի նա քեզ, ինչ պէտք է սովորես նրանից։

— Սովորելու շատ բան կայ նրանից, — մտած կոտ լրջութեամբ ասաց Վիրջինիան։ — Ամենից առաջ կարող եմ սովորել թէ ինչպէս պէտք է օիրել մարդուն, կարելցել ընկերին ոչ թէ միայն խօսքով, այլ և գործով։ Մենք բոլորս, տամաի, այդ նկատմամբ շատ տգէտ ենք։ Ասումն են, ով ծովով չէ ճանապարհորդել, նա խկական երկիւղ չի զգացել, նա ի սրտէ Աստուծուն չի ազօթել ես կարծում եմ, նոյնքան ուղիղ կը լինի ասել, թէ ով ի մօտոյ մարդկային վիշտ ու տանջանք չի տեսել, նա գէպի մարդը՝ իսկական կարելցութիւն, կենդանի սէր ունենալ չի կարող։ Օրինակ, հէնց իմ մէջ ինչ սէր կայ գէպի մարդիկ։ Ուրիշների հետ միասին ես ես խոստացայ Քրիստոսի հետքով գնալու, իմ անձն ու միջոցները Աստուծոյ գործին նուիրելու, այն ինչ, չդիտեմ նոյն խկ, թէ այդ ինչպէս պէտք է անել։ Ահա քանի ժամանակ է տանջուռում եմ, մտածում եմ ու մտմտում և մի բանի հասնել չեմ կարողանում. բայց չէ որ, տատի, այսպէս տանջուռում եմ ոչ թէ մենակ ես, այլ ինձ նման հարիւրաւոր, հաղարաւոր աղջիկներ։ Միթէ բոլոր աղջիկներին էլ հաւասարապէս զբաղեցնում ու կատարեալ գոհացումն են պատճառում սովորական այցելութիւնները, ընդունելութիւններն ու երեկոյթները։ Կան և կենդանի հոգիներ։ Նոանք տառապում են կուշտ կեանքի գատարկութիւնից, կենդանի գործի են տենչում, սակայն թէ ինչպէս պէտք է գործի ձեռնարկեն։ չգիտեն։ Մենք, հարսւատ ու բարձր գասակարդի աղջիկներս, կարծես ապրում ենք մի ինչ որ բարձրութեան վրայ կախարդուած գղեակում, որտեղից մարդկանց մեծամասնութեան սովորական կեանքը երկում է

միմիայն շատ աղօտ կերպով և ուր համեմամ է ներքեցից մի շատ խուլ ազմուկ ու հեծեծանք, իսկ ով է հեծում և ինչու... Ո՞ւմ պէտք է օդնել և ինչով, անյայտ է մեզ։ Մարդկային տանջանքի, ծայրայեղ աղքատութեան, հոգեսր թմրութեան ու յուսահատութեան գիրքը մեղ շատ քիչ է ծանօթ։ Մենք նման ենք ջերմացում՝ բուսած ծաղկի, պաշտպանուած եղանակի խստութիւններից, միմիայն լսելով գիտենք, ինչ է ձիւնը, երաշտը, կարկուտն ու ցուրտը...»

— Իմ սիրելի տատի, — Վիրջինիան գրկեց իւր տատին ու գլուխը գրեց նրա կրծքին, — խնդրում իմ, մի խանգարիր ինձ։ Թոյլ տուր ինձ, որ իջնեմ իմ հարստութեան ու անհոգութեան բարձրութիւնից դէպի մարդկային տանջանքի ու վշտի հովիտը և լսեմ նրանց հեծեծանքը, թռղ որ Աննա Կրոսը մի առ ժամանակ մեր տանը մնայ։ Մեր փաղաքշանքներով, բարի ու խելացի խօսքերով մենք կը ջերմացնենք նորա հոգին, իսկ նա մեզ կը պատմէ թշուառների կեանքի պատմութիւնը, ցոյց կը տայ թէ ինչ միջոցով իմ կարողութեան ու դիրքի մի աղջիկ կարող է օգտակար լինել այդպիսիների համար։

Վիրջինիայի խօսքերը հանգստացուցիչ կերպով աղդեցին իւր տատի վրայ։ Նրա բարկութիւնը իջաւ և ըսկան խօսել մեղմ կերպով, սակայն նա դարձեալ չեր կարողանում հաշտուել այն մտքի հետ, թէ մի որհէ Աննա Կրոս պիտի տպրի իրենց հետ միասին միևնույն յարկի ամկ։

— Այդ բոլորը լաւ է, սիրելի աղջիկա, — ասաց տատը, — բայց ես այնու ամենայնիւ լաւ չեմ հասկանում, թէ դու ինչու ես ուզում, որ քո Աննան անպատճառ մեղ հետ ապրի։ Ինձ թում է, որ այդ աւելորդ է։ Ուզում ես իմանալ, թէ ինչպէս են ապրում մարդիկ այնտեղ՝ վշտի հովտում, հարց ու վարձ արա Աննային, իմացիր նրա կարիքները, օգնիր նրան և ապա ճանապարհ գիր գնայ։ Վերջապէս, իրաւունք տուր նրան՝ կարկը ստիպած ժամանակ՝ ամենայն վստահութեամբ քեզ դիմելու, Այսչափը

կարծեմ, բաւական է, չէ:

—Ա՛յ, տամաի ջան, դա դեռ շատ քիչ է: Թու շարունակ խօսում ես գրամական օգնութեան մասին, այն ինչ այսաւեղ փողի խնդիր չէ:

Եթե բան է փողը Տպած թղթի, սովու կամ արծաթի մի կտոր, որի միջոցով կարելի է լցնել գատարկ ստամբուլ, ծածկել մերկութիւնը, բժշկել այս կամ այն հիւանդութիւնը, բայց երբ հիւանդ է մարդու հոգին, երբ սիրան է մարմարում ու խիզճը ճնշուում, այն ժամանակ գրամով օգնել չի կարելի: Այդ դէպքում սիրող հոգի է պէտք, ոչ թէ դրամով լի քուակ, այլ սիրով լի սիրու:

Երբ մեզաւոր կինը փարիսեցի Սիմօնի տանը Քրիստոսի ոտների մօտ ծունկ չոքած հեկեկում էր և արտասուբով լուանում նորա ոտները, միթէ դրամով պէտք էր հանգստացնել նրան, միթէ դրամական օգնութիւն էր պէտք նրան: Նոյնն է այժմ և մեր խեղճ Աննա կրոսրւ նրա հոգին ու սիրու այժմ սիրով ու կարեկցութեամբ լի մեծ խնամքի են կարօտ, որ ոչ մի դրամով ձեռք բերել չի կարելի:

Պէտք է նրան բարձրացնել իւր իսկ աչքում, զօրացնել նորա թոյլ կամքը, մաքրել նորա բարոյական տիղմը: Իսկ այդ կարող է անել միմիայն անձնուրաց սէրը գէպի մերձաւորը, և ոչ թէ վարձկան ծառայողի նոյն իսկ եռանդագին ջանքը, ես կարծում եմ, որ առ հասարակ մեր արած բարեգործութիւնները պէտք է կապուած լինին կարեկցութեան ու հոգատար սրտի հետ և ոչ թէ միայն դրամական զոհողութեան հետ:

Եսկ այժմ բարեգործութեան մասնակցում է դլխաւարապէս գրամը և ոչ թէ մարդը: Հարիւրներ ու հազարներ են նուիրուում, բարեգործական հաստատութիւններ են հիմնուում, կանոնագրութիւնն է մշակուում, ծառայողների խումբ է կազմուում, որ իրրե վարձկան նայում է իւր դործին փող աշխատելու տեսակէտով, այնպէս որ բարեգործութեան մէջ, եթէ ոչ բոլորովին, գէթ մեծ մա-

սով բացակայում է քրիստոնէական սէրն ու կենդանի հոգին:

Մեր սովորական բարեգործութիւնը, ուղիպն ասած, ոչ թէ սիրոյ գործ է, այլ գրամի, որն իրրև փրկանք է տրւում առաջնի փոխարէն Թշուառին, խեղճին ու աղքատին ջերմ կարեկցութիւն ցոյց տալ, նրա վիճակը թե՛թե ացնել, վիշտը ուրախութեան փոխել, նրանց համար գթութեան եղբայր կամ քոյր լինել, այս ամենը սիրոյ մեծ պաշար է պահանջում։ Աւելի հեշտ է մի քանի ուուրալի, հարիւրներ և նոյն իուկ հազարներ տալ՝ կարողութեան համեմատ։

Եւ բանից գուրս է Պալիս, որ մենք բարեգործութիւն ենք անում ոչ թէ սրտի առատութիւնից, այլ գըրպանի։ Այդ պատճառով էլ մեր բարեգործութիւնն այնքան պալ է, ձանձրալի ու ապարդիւն։ Բարեգործութեան համար միլիոններ են ծախսում, այն ինչ թէ բարեգործների և թէ բարերարեալների մէջ մի կաթիլ անգամ սէր չի աւելանում։ Առաջինները տալիս են անսիրտ կերպով, վերջինները ընդունում են առանց զգացուելու։ Զկայ կենդանի զգացմանքի կայծ, որ մարդու սրտումն է արծարծւում և ուրիշների մէջ համապատասխան հուր բորբոքում և որը կարող է միշտ միլիոններ գտնել, բայց ինքը ոչ մի դրամով չի ձեռք բերուում։

— Դու երեխ ձանձրացար իմ շատախօսութիւնից, սիրելի տատի, — ընդհատեց ինքն իրան Վիրջինիան։ — Դու, նոյն իուկ, կը զարմանաս երեխ, թէ քո յիմար թռող որտեղից է այսպիսի մտքեր հաւաքել։ Դիտես ինչ է, վերջին երկու երեք շաբաթուայ ընթացքում՝ ես շատ եմ մտածել ու խորհել և այժմ իմ մէջ կարծես մի հրաբուխ է եռում ու դուրս ժայթքել ուզում։ մտքերս տակնուվրայ են լինում։ Նոյն իուկ անցեալը ափսոսս է գալիս։ Ամեն մէկիս մէջ որքան բարի սաղմեր կան և մենք որքան քիչ ենք աճեցնում։ Այսքան տարի ապրել եմ և որքան քիչ եմ մտածել լուրջ խնդիրների մտսին։ Օգնիր ինձ գէթ այժմ կենդանի դործի կպչելու, թայլ տուր, որպէս սկիզբն։

գելթ այս թշուառին մի անկիւն տալու թէ իմ որոշում և  
թէ մեր տանը նա այդ երկուսին էլ մեծ կարիք ունի։  
Ճշմարիտ եմ տառմ, տատի, որ գրանից մեր տունը ոչինչ  
չի կորցնում, այլ միայն շահում է։

Վիկտօր Հիւգոյի մի վեպում պատմուած է, թէ ինչ-  
պէս քրիստոնէական բարութեամբ օժտուած մի եպիսկո-  
պոս իւր նոր պաշտօնատեղին գնալով՝ իւր ընդարձակ  
ապարանքի կողքին մի հասարակ ու ցածրիկ շինութիւն է  
տեսնում։

Ի՞նչ բանի է ծառայում այս փոքրիկ տունը. — հարց-  
նում է նա պատահողներին։

— Հիւանդանոց է, որբազան։

— Ի՞նչո՞ւ է այդպէս փոքր. ձեր մէջ հիւանդներ գիշ  
են լինում։

— Ո՛չ, ընդհակառակը շատ շատ են, սակայն քաղաքը  
միջոց չունի հիւանդանոցը ընդարձակելու, ուստի և հի-  
ւանդները ակամայ իրար վրայ են կուտակուում։

— Ի՞նչո՞ւ պէտք է նրանք կուտակուին մի փոքրիկ տան  
մէջ, մինչ նրա կողքին մի այնպիսի ընդարձակ շինութիւն  
կայ, որտեղ պէտք է ապրեմ մենակ ես։ Տեղաւորեցէք  
նրանց իմ տան գատարկ մասերում, թող նրանք լայ-  
նարձակ տեղ ունենան։

— Բայց, որբազան, ձեր տունը որոշ նպատակի է  
յատկացրած։ Վայել չէ, որ ձեր տունը հիւանդանոցի  
փոխարկուի։

Մի վախենաք, տեղափոխեցէք հիւանդներին, — վերա-  
ջացրեց եպիսկոպոսը. — Եմ տան արժանիքը միմիայն կը  
բարձրանայ, երբ նա կը ծառայի ոչ թէ միայն ինձ՝ Քրիս-  
տոսի անարժան ծառայիս, այլև աւետարանական կեն-  
դանի սիրոյ գործին։

— Մենք էլ, տատի, պէտք է վախենանք մեր տան  
արժանիքի համար, պատոպարելով Աննա Կրոսին և, յե-  
տոյ գուցէ, նրա նման մի քանիսին ես։

Տատը երկար ժամանակ լուռ էր, յետոյ ըռնեց Վիր-

Ջինիայի ձեռքն ու համբուրեց, մինչև նա կը կարողանար յետ քաշել:

— Հոգիս, ներիր ինձ, յիմար պառաւիս, Քրիստոսի հետքով ընթանալու ձեր արած խոստումը ես մի անհետեթ բան էի համարում: Այժմ ես հասկացայ դորանշանակութիւնը, ըմբռնեցի, թէ որքան քարձր մի ձըդտումն է . . . Աստուած իմ, որքան կոպիտ ենք մենք ու եսուական: Ե՞նչպէս մենք ամենքս բթացած ենք հոգով: Ե՞նչպէս մեսած են մեր բարի զգացմունքները: Թող Աստուած քեզ օգնէ: Արա, ինչպէս սիրտդ թելադրում է քեզ և տայ Աստուած, որ դուք երիտասարդներդ հներից աւելի լաւ կարգաւորէք ձեր կեանքը:

Թոռն ու տատը ուրախ սրտով բաժանուեցին իրաւուց ու իրենց սենեակները քաշուեցան:

Մինչ Վիրջինիան խօսում էր տատի հետ, Աննա կը լոսը, իրեն պատսպարողի կարգադրութեան համաձայն, լուացուեցաւ ու հագաւ նրա առանձին հագուստը: Այդպէս մաքրուելուց ու շորերը հագնելուց յետոյ նա մի բարետեսիլ ու համեստ աղջիկ էր դարձել: Նախկին թըշտուած վիճակի հետքն անգամ չկար նրա վրայ: Աչքերը փայլում էին մեղմ ուրախութեամբ, շրթունքների վրայ խաղում էր երանական ժաղիտը: Նա իրան վանդակից աղատուած թռչնի պէս էր զգում: Նրան այնպէս էր թուում, որ երկար ժամանակ նստած է եղել բանտում, մուժ գետնի տակ՝ իսկ այժմ՝ յանկարծ աղատուելով բանտից՝ լոյս աշխարհ է դուրս եկել: Երբեմն էլ նրան թուում էր նոյն խեկ, թէ երազի մէջ է տեսնում այդ բուժրը, ուստի և վեր էր կենում, ման էր դալիս, հայելու մէջ էր նայում և երեխայի պէս շփոթուած հարցնում էր:

— Միթէ այս եռ եմ, Աննա կրօսա:

— Այն, այդ դուք էք, Աննա կրօսը, — ասաց Վիրջինիան ներս մանելով: Լաւ էր զգում ձեզ, չէ:

Վիրջինիան նայում էր նրա վրայ, ինչպէս մայրը՝ իւր մանկան: Հրճուում էր մանկական ուրախութեամբ և ըզգում էր, որ ինքն էլ նրանից պակաս չէր ուրախացել:

Աննան բռնեց Վիրջինիայի ձեռքը և ուղեց համբուշ րել, սակայն Վիրջինիան գրկեց նրան ու նստեցրեց իւր կողքին դիւանու վրայ:

Աննան շփոթուելով ու քաշուելով պատճեց նրան իւր ամբողջ անցեալը: Այդ մի թէև սովորական, բայց սոսկալի պատմութիւն էր, որի նմանը կրկնուում է ամեն օր: Վիրջինիան երբեմն ընդհատում էր նրան:

—Այդ սարսափելի է ... Անկարելի է ... Ի՞նչպէս են թոյլ տալիս: Այլ ևս համբերել չի կարելի: Պէտք է մի բան անել ... Բայց ի՞նչ և ի՞նչպէս:

Աննայի պատմուածքից Վիրջինիան հասկացաւ, որ մեծ քաղաքները ջրապտոյտի նման պտտեցնում ու խեղդում են երիտասարդ ու որը աղջիկներին, կատարեալ անփորձութիւնը, միայնակութիւնը, պատանեկութեան յատուկ զուարճութեանց և ուրախութեանց ծարաւը և ամեն մի քայլափոխում պատահած մշտական գայթակշղութիւններն օրհասական կերպով դէպի կորուստ են տանում աղջիկներին:

—Զարմանալի բան է,—մտածում էր Վիրջինիան,— այդիները ցանկով պատում են, որ անսառուններից ոտնակուս չինին, չիչանան: Փողոցների վրայ տնկած մատաղ ծառերին կից նեցուկ փայտեր են գնում պաշտպանութեան համտր, ցանկով պատում են և հէնց նոյն փողոցներում առանց որևէ հոգացողութեան և պաշտպանութեան են թողնում հարիւրաւոր ու հաղարաւոր ջահիլ, ճկուն, մտաղ հոգիներ: Ի՞նչպէս է, որ չեն մտածում պաշտպանելու նրանց ոտնակուս լինելուց ... Երբ ջրապտոյտը արգէն ներս է քաշել իւր զոհին, այլ ևս հընար չկայ աղատելու: Պէտք է նախապէս միջոցներ ձեռք առնել: Քաղաքների բոլոր բաղմամարդ թաղելում պէտք է այնպիսի հաստատութիւններ հիմնել, որտեղ մաքսւր, բայց ջահիլ ու անփորձ տղջիկները կարողանային նեցուկ ու պաշտպանութիւն գտնել կետնքի այլևայլ փորձութիւններից ու գայթակղութիւններից:

—Ասացէք, Աննա, — հարցրեց Վիրջինիան, — Միթէ

ձեր՝ մենակութեան ժամանակի ընթացքում «Ուղիղ Անկիւնում» դուք երբէք չեք հանդիպել մի բարի հոգու, որ ձեզ պատսպարէր, տաքացնէր, սրտագին խօսքով ամրապնդէր:

Աննան մտածմունքի մէջ ընկաւ.

—Ո՞չ ... բայց ներողութիւն, միաս եկաւ կեանքիս առանձնապէս ծանր բոպէներին մի երկու անգամ զնացել եմ քոյր Վարվառէի մօտ, նա միշտ սիրով էր ընդունում ինձ, նրա մօտ ես ինձ լաւ էի զգում և իմ վարձ վատ կեանքը զգուելի էր դառնում ինձ համար:

—Ո՞վ է այդ քոյր Վարվառէն, —հետաքրքրութեամբ հարցրեց Վիրջինիան:

—Դա մի սուրբ կին է: Նա շատ հեռու տեղից է, օտար Ելկրից, Ահա երորդ տարին է, որ նա ապրում է «Ուղիղ Անկիւնում»: Քաղաքի բոլորովին ծայրում, համարեա թէ գաշտի մէջ, նա մի տուն է կառուցել և այնտեղ պատսպարում է անտուն անտէր աղքատներին: Նրա մօտ են գնում ամեն տեսակ երեխաներ և հասակաւորներ, տղամարդիկ և կանայք, թափառաշրջիկներ, աղքատներ և հացի կարօտ բանուորներ: Նա, որքան կարողանում է, կերակրում է նրանց, լուանում, մաքրում ու կարկատում է նրանց շորերը. իսկ որ գլխաւորն է, ամենքին էլ սիրով է վերաբերուում, ոչ ոքին ճանապարհ չի դնում առանց մի քաղցր խօսքի:

«Ահա պէտքական անձնաւորութիւն», մտածեց իւր մէջ Վիրջինիան:

Դժբախտաբար Աննան շատ բան չգիտէր քոյր Վարվառէի մասին, ուստի և Վիրջինիան վճռեց հետեւեալ օրն անձամբ գնալ ու մանրամասնօրէն տեղեկանալ քոյր Վարվառէի և «Ուղիղ Անկիւնում» վարած նրա կեանքի մասին:

Խուս. թարգմ. Մամբեկ Վարդապետ.

(Նարուհակելի)